

ԱԹՏՆԻՆ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ

Յորենի, ավերի և հայի կրայ Ռէտանի  
մասնաւոր գիտելիներ :

Յօրեն . Հաց շինելու յորենը թէ որ  
սաստիկ չոր ըլլայ՝ աղալէն առաջ թե-  
թե մը թրջելու է . իսկ երբոր չափէն  
աւելի խոնաւ՝ պէտք է ցամքեցընել :

Պէտք չէ զանազան տեսակ ընդե-  
ղէններ, ինչպէս են յորեն, գարի, հա-  
ճար, և այն, միատեղ աղալ, վասն զի  
աղէկ չաղացուիր, ինչու որ մէկուն ա-  
ւելի բարձր, մէկալին ցած աղօրիք  
հարկաւոր կ'ըլլայ :

Հարիւր հոխայ մաքուր յորենը աղա-  
լով կը մնայ եօթ անասունը հինգ հոխայ  
ձերմակ ալիւր, քսանը զորս հոխայ թեփ,  
ու մէկ հոխայ մըն ալ կը կորաւի :

Լաւ-ր . Լիւրը որպէս զի չաւրուի,  
պէտք է որ չոր ըլլայ մաքուր ու չոր սրն-  
տուկի կամպարկի մէջ պինդ մը լեցու-  
ցած, ու պարկերն ալ իրարմէ մէյմէկ  
քիչ հեռու, այնչափ որ մէջերնէն կա-  
րենայ օդ բանիլ, որ իրար չի տաքցը-  
նեն :

Յօրենի ալիւրը շաղուելու համար  
գործածուած ջուրը պէտք է որ պաղ  
ըլլայ, միայն ձմեռը քիչ մը կրնայ տաք-  
ցուիլ . իսկ երբոր ալիւրդ հաճարի է՝  
պէտք է եռացած ջուր գործածել :

Լիւրը որչափ մաքուր ըլլայ, այն-  
չափ աւելի ջուր կը ծծէ, անոր համար  
անկէց ելած հացն ալ կը շատնայ ու  
մննդարար կ'ըլլայ . բայց կը խարուին  
որոնք որ հացս շատ ըլլայ ըսելով՝ ա-  
լիւրին թեփիր մէջէն չեն հաներ . վասն  
զի ան ատեն ալիւրը շատ ջուր չկրնար  
ծծել ու չմեծնար . բաց ասկէ՝ թեփը  
մնունդ ալ չտար, հապա անոր ներհակ  
վասները շատ են :

Հարիւր հոխայ աղէկ ալիւրը վաթ-  
սունը կեց հոխայ ջուր վերցընելով հա-  
րիւր երեսունուիրեք հոխայ հաց կը չի-  
նուի . բայց արեւելքի յորենները աւե-  
լի ուժով ըլլալով ինչուան հարիւր յի-  
սուն հոխայ կրնան շատնալ : Աստի ա-

լիւր մը որչափ աւելի ջուր վերցընէ .  
այնչափ աւելի ազնիւ կը սեպուի :

Պաքսիմատ շինելու համար մաքուր  
ալիւր պէտք է, ապա թէ ոչ երկար ա-  
տեն չդիմանար կամ կը մքլոտի :

Հայ : Հային քանակիր չորսին մէկ  
աւելի կը շատնայ թէ որ շաղուելու ա-  
տեն հասարակ ջուր գործածելու տեղ  
թեփի ջուր գործածես : Ծաւփին ջուրը  
հանելու կերպն աս է . իրիկուընէ ցո-  
րենի թեփը պաղ ջրին մէջ ձգէ որ բո-  
լոր զիշերը ջուրը ծծելովիր մննդարար  
հիւթը դուրս տայ . առատուն թեփը  
սխմելէն ետքը ջուրը լաթէ անցընելու-  
է : Լու ջրով թէ որ խմորդ շաղուելու-  
ըլլա՝ չէ թէ միայն հայդ կը շատնայ,  
հապա կ'ըլլայ նաև դիւրամարս ու մնըն-  
դարար :

Խմորը գործածելու ատեն զգուշա-  
նալու է որ ըլլայ թէ սաստիկ թթուած  
ու դառն ըլլայ խմորը . վասն զի հայը  
կ'աւրէ և գէշ հոտ ու համ կը ձգէ .  
գարձեալ շուտ կը մքլի գէշ խմորով շի-  
նած հայը . ամենելին պէտք չէ շուտ  
խմորի ըսելով գարեթուր կամ քացախ  
խառնել մէջը :

Խւրոպացիք սովորութիւն ունին որ  
ալիւրը շաղուելէն ետքը մէկէն տաշտէն  
կը հանեն, թէ որ ձմեռ է՝ տախտակի  
մը վրայ կը ձգեն կէս ժամփ չափ, իսկ  
թէ որ ամառ՝ մէկէն կը կտըրտեն ու  
կը թողուն տաքուկ տեղ մը որ շուտ  
խմորի, և խմորելու նշանն այն է որ  
մատովդ հրելու որ ըլլաս՝ խմորը դար-  
ձեալ կ'ուռի ու մատիդ տեղը չմնար .  
բայց թէ որ տեսնես որ չափը անցեր է՝  
լաւ է որ բոլոր խմորը պաղ ջրովնորէն  
շաղուես ուրիշ ալիւրի հետ քան թէ  
այնպէս փուռը զնես :

Գիւտանոյ ըսուած հայը որ շատ հա-  
մով ու ախորժելի է, կը շինուի հաճա-  
րի ալիւրէն . աախկայ խմորելու համար  
կը գործածուի մեղրաջուր կամ խաղողի  
ջուր . ասոր աղէկը Ունա քաղաքը կը  
շինեն :

Ունա ըսուած կարմիր յորենէ հա-  
ցը շինելու ատեն հարկաւոր է եփած  
ջուր բանեցընել . խմորը երկայն ատեն

շաղուելու է շարունակ աղ դնելով, խը-  
մորելու համար շատ սպասելու չէ՝ որ  
փուռի մէջ երկայն ատեն չկենայ. [թէ  
որ աս ըստած պայմաննիս պահուին՝ չէ  
թէ միայն սբելզայի ալիւրով շինածը-  
սե, կոշտ և գժուարամարս ըլլար, հա-  
պա նաև ձերմակ, [թէթև, համեղ  
կ'ըլլայ և իրեք չորս որ ալ թարմ կը  
մնայ :

Խրոսլացիք նաև հաճարէ, գարիէ,  
մայիզէ կամ եզիստացորենէ, վարա-  
կէ ալ հաց կը շինեն, որոնց շաղուե-  
լու ու եփելու կերպը ամենսին նման  
է Աբելզա ըստած ցորենի հային, աս  
տարբերութեամբ միայն որ հարկ չէ  
շարունակ աղ դնել ինչպէս որ ըսինք:  
Բաց ասոնցմէ կրնայ հաց շինուիլ նաև  
շագանակէ, դդումէ, գետնախնձորէ,  
փաթաթէ, որ անշահ բաներ ըլլարուն՝  
հոս աւելորդ կը սեպենք մէկիկ մէկիկ  
վրանին խօսիլը :

## Բ'ԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԱՍՏԵՂԱԲԱԾԽՈՒԹԻՒՆ

ՈՒԷ Բ'ԱՀԿԻ Պէտք է Ճամացոյները շրկէլ:

ԴԱՄԱՆԱԿԻ չափոյն վրայ խօսած  
ատեննիս տեսանք որ մարդիկ արեւուն  
օրական առերեւոյթ շարժումը ժամա-  
նակի միութիւն հաստատելով օր ըսեր  
են, և այս միութեանս այլ և այլ գու-  
մարներուն ալ ըսեր են էօննեակ, ամսո,  
և այն : Դամանակի այս չափերը քա-  
ղաքական պիտոյից համար սահմաննելու  
ատեն՝ արեւուն օրական առերեւոյթ  
շարժումը միօրինակ սեպեցինք, որ  
ձիշդ չէր. վասն զի, ինչպէս առաջ ալ  
տեսանք, արեւը որ մէկ միջօրէէ կ'ել-  
լէ ու նորէն կը դառնայ, մի և նոյն  
ժամանակին մէջ ծրի խաւարման կա-  
մարին վրայ ալ դէպ 'ի արեւելք տեղա-  
փոխութիւն կ'ընէ. ասոր համար է որ  
եթէ այսօր արեւը երկնագնտին մէկ  
կէտին վրայ կեցած գայ մեր միջօրէէն  
անցնի, վաղը երբոր երկնագնտին նոյն

կէտը՝ որուն վրայ էր արեւը, գայ նորէն  
մեր միջօրէէն անցնելու ըլլայ, կը տես-  
նենք որ արեւ նոյն կէտին վրայ չէ, հա-  
պա քիչ մը դէպ 'ի արեւելք մնացած .  
ուստի մեր միջօրէէն վրայ համելու հա-  
մար՝ պէտք է որ երկնագունտը իր միա-  
կերպ շարժմամբը հասարակածին վրայ  
ամբողջ մէկ շրջան մը կատարելէն ետև  
քիչ մըն ալ շարժի որ արեւը մեր միջօ-  
րէէն վրայ գայ :

Դատեղաբաշխական գիտողութիւն-  
ներով իմացուեր է որ արեւ տարին տա-  
սուերկու ամիս ծրի խաւարման շրջա-  
նակին վրայ մի և նոյն երագութեամբ  
շարժիր, հապա երբեմն օր օրուան վը-  
րայ կ'երագէ մինչև մէկ մասնաւոր չափ  
մը, ու նորէն կը սկսի հետզհետէ դան-  
դաղիլ, այնպէս որ իր նուազագոյն ե-  
րագութեանէն, որ 57' 14" մասն աստի-  
ճանի է օրը, հետզհետէ երագելով վեց  
ամսուան մէջ ինչուան 61' 12" մասն  
կ'ըլլայ, որ է իրեն մեծագոյն երագու-  
թիւնը, ու դարձեալ կը սկսի հետզհե-  
տէ նուազիլ և վեց ամսուան մէջ կու-  
գայ առաջին չափը կ'առնու :

Դիմայ արեւ գիշերահաւասարի մը  
կետէն ելլելով ու նորէն նոյն կէտը հաս-  
նելու համար 365 օր, 5 ժամ, 48' 50", 2,  
ժամանակ կ'անցրնէ, որով ըսել է թէ  
մէկ օրուան մէջ 59' 8", 33, մասն աստի-  
ճանի նոյն գիշերահաւասարին կետէն  
կը հեռանայ, [թէ որ սեպելու ըլլանք  
թէ արեւը ծրի խաւարման կամարին  
վրայ միակերպ շարժմամբ կ'ընթանայ :  
Երբոր ճշմարիտ արեւը ծրի խաւարման  
այն կէտին վրայ համնի՝ ուր իր մեծա-  
գոյն երագութիւնն ունի, որուն աստե-  
ղաքաշիք նէրչակէտ կ'ըսեն, ուրիշ արեւ  
մըն ալ երեւակայենք որ նոյն կէտին վը-  
րայէն ճշմարիտ արեգական հետ մէկ-  
տեղ սկսի խաւարման ծրին վրայ շար-  
ժիլ, բայց այնպէս որ օրը 59' 8", 33  
միջին չափով միակերպ առաջ երթայ .  
սկզբան ճշմարիտ արեւուն երագութիւ-  
նը ասկէ աւելի ըլլալով միջին երագու-  
թիւն ունեցող արեւէն առաջ կ'անցնի,  
բայց հետզհետէ երագութիւնը նուա-  
զելով վեց ամիսէն ետև երկուքը մէկ-